



Բաժնեգիր,
Տարկ. 50 դր
Արտաճ. 136
Կենտրոն 2 Տ

ՊԱՅՄԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՏ ԶԵՆՏՈՒՄ
ՃԱՆՈՒՑՈՒՄ
ՄԱՍՆԱԿ
ՊԱՅՄԱՆՈՒՄ
Եւրոպ
DIRAN
PAPAZIAN

Alexandrie
(Egypte)

Յիւլի 1 2րդ ուր

ԱԶԳԱՅԻՆ

Կալուածական խնդիրը

Կը տեղեկանանք թէ՛ եկեղեցական կալուածները Ռուս կառավարութեան չյանձնելով ընդգիծութիւն ընողները իբր տէրութեան դէմ ըմբոստացողներ ամբաստանուելով դատի քաշուեր, բայց անոնց փաստարաններուն կորովի պաշտպանողականին վրայ բոլորովին անպարտարձակուեր են գատարանի կողմէն:

Այս խնդրոյն հետաքրքրական, աւելի ճիշդը կատակերգական կողմը այն է որ Ռուս կառավարութիւնը մինչդեռ պէտք չտեսնար Հայոց եկեղեցական կալուածները գրաւելու ժամանակ իրաւարանութեան դիմելու, և ըստ կամս ու բռնի կը գործադրէ վայն, պէտք կը տեսնէ այդ խնդրոյն մէջ ընդգիծութիւն ընողներու իրաւունքը որոշելը դատարանին յանձնել: Սիւալ մըն է այս թէ կատակերգութիւն մը: Ռուս կառավարութիւնը ինչէ՞ն կըլլայ որ եկեղեցական կալուածները բռնի գրաւելու մէջ իրեն իրաւունք կուտայ, բայց այդ հայերուն բռնի դատապարտութեան մէջ իրեն իրաւունք չի տար, և դատարանը աղատ կըլլայ տալու այնպիսի վճիռ մը որ անուղղակի դատապարտութիւն մըն է Ռուս կառավարութեան գործած բռնարարումին:

—Նպաստից Եանձնաժողովը որոշած է Վանայ Սալնագատի Ս. Գրիգորի ազգական որբանոցը արհեստանոցի վերածել նոյնպէս մաագիր է Սեփաստոյ մէջ ալ արհեստանոց մը բանալ:

—Մուշի Պատր. Փոխանորդ Գնել Վարդապետ ձեռնարկած է ժանկերու որբանոցը արհեստանոցի վերածել, որ պիտի պարունակէ 30 որբ տղայ: Մնացեալները պիտի զրկուին Առաքելոց վանքը և հոն պիտի շարունակեն իրենց ուսումը: Մինչև որ մեծնալով հետզհետէ անոնքն արհեստանոցին մէջ:

—Պուշէն անուամբ մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք թէ այս օրերս իս տութիւնները սաստկացած են հայերուն դէմ, թէ Սասուն պաշարուած է թուրք զօրքերէն, որովհետև Սնդրանիլ յաջողած է 1000 Հայ յեղափոխական ընկերներով Սասուն մտնել, որուն գալմագամն ու կառավարական պաշտօնեայր փախեր են:

Բասէնի և Գումաձորի մէջ Հայերու և թուրքերու միջև ընդհարումներ տեղի ունեցեր են:

—Սոսկուայէն Վերածնութիւնի կը գրեն հետեւալը:

«Հեռագիրները հալորդում են որ Ալեքսանդրապոլում 2 ժանդար և 1 հատ էլ փոստի ծառայող են սպանուել: Սպանողները անյետացել են: Մասնաւոր նամակներից իմանում ենք որ 2 տղիկան էլ Գանձակում և 1 հատ էլ տանուտէր Սուրմալուի գաւառում են սպանուել: Կովկասի հայաբնակ քաղաքների գրութիւնը ստաէ ստ որ»

պէ վատթարանում է. Փակուել են հայոց հոգեւոր զպրոցները: Գոնէ ժամանակաւորապէս դարարեցրել են կովկասի հայ թերթերը: Բանտարկուած են Տփղիսում մի քանի հայ գործիչներ, ի միջի այլոց և մէկ երկու հայ թերթերու խմբագիրներն:

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Եւրոպան կը յառաջդիմէ ինքնօրնութեամբ — մենք կը ջանանք յառաջդիմել ինքնախաբէութեամբ: Եւրոպան գոհ չէ իր վայելած մտաւորական ազատութենէն և կը ջանայ մտքերու տալ աւելի ազատ ասպարէզ, — մենք գոհ չենք որ արդէն մտքերնիս չլթայած ենք մեր իսկ ձեռքերով, և կը ջանանք զայն աւելի ամրապընդել:

Ամէն ինչ կ'ընդօրինակենք եւրոպայէն ամենայն ջերմեանդութեամբ, բայց եւրոպայի մտաւորական ազատութեան առջեւ կը կանգնենք ու ըսել կուզենք, «Եւրոպան կը սխալի, մեր դրութիւնը լաւագոյն է»: Լաւագոյն էր սակայն որ ոչինչ ընդօրինակէինք եւրոպայէն բացի իր մտաւորական ազատութեան սկզբունքէն: Վասն զի այդ իսկ է եւրոպական ժողովրդոց յառաջդիմութեան ու մեծութեան պատճառը:

Թէ՛ նիւթական, թէ՛ բարոյական և թէ՛ մտաւորական զարգացման համար անհրաժեշտ է որ միտքը խորհի, դատէ, տրամաբանէ, եւ խորհելու, գատելու և տրամաբանելու համար անհրաժեշտ է որ միտքը ազատ ըլլայ ամէն ազդեցութենէ, ճնշումէ և երկմտութենէ: Ինչի՞ կը ծառայեն ուրեմն, դպրոց, մամուլ և գրականութիւն եթէ միտքը ազատ պիտի չըլլայ, եթէ պիտի խորհի միշտ կղերին, յեղափոխականին, հարուստին և նոյն իսկ գրագէտին, կամ ինքնակոչ գրաքննիչներու ճնշումին ու ազդեցութեան տակ: Այլևս ի՞նչ յոյս կը մնայ մեզի, երբ նոյն իսկ գրագէտը մտաւորական ազատութեան անուղղակի խոչընդոտ հանդիտանայ: Մըտքերու ազատագրութիւնը միակ միջոցն է մեր ընկերական և ազգային փրկութեան: Պէտք է աշխատիլ ոչ թէ մարդիկը լռեցնելու, այլ նոյն իսկ կենդանիները խօսեցնելու: Պէտք է սորվեցունենք թէ ամէն միտք իրաւունք ունի տալ իր արդիւնքը անվեհեր ու համարձակ:

Ամէն մեծ խորհուրդ, ամէն մեծագործութիւն, ամէն գիւտ և հնարք արդիւնք են մտա-

սորկութեան կ'առաջնորդեն ժողովուրդը, զի տակցարար կամ անգիտակցարար, դաւաճաններ, են:

Ս. ՄՈՒՐՍԵԱՆ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ս. Փեդրոսպուրկ 2 Փետր. — Յունվարի 21 թուականով զինուորական հրաման մը կաւելցնէ ուսական պահեստի հետեակագործին թիւը. արդէն 50 հազար մարդ վատիվոստոք կ'սպասուին ուրիշ պիտի մեկնին երթալ միանալու ծայրագոյն արևելքի բանակին:

Հաւանական է որ բոլոր պահեստները շուտով շարժման մէջ դրուին:

Լոնտրա. — Թագաւորը՝ թագուհին, կալէսի իշխանին ու իշխանուհիին հետ գալով, հանդիսաւորապէս բացաւ Խորհրդարանը: Ն. Վեհափառութիւնը, յայտարարելէ յետոյ թէ օտար տէրութեանց հետ յարաբերութիւնները գոհացուցիչ են, մանաւանդ Ֆրանսայի և Իտալիոյ հետ, որոնց միջև բարեկամութեան անխախտ կապեր հաստատուած են, թէ Ռուսո—Ճաբոնական բանակցութիւնները հետզհետէ սուր կերպարաձեւ մը կ'առնեն. կը վերջացնէ իր գահաճառը սապէս. «Աւստրո—Ռուսական բարենորոգմանց ծրագիրը Բ. Գոնէն ընդունուեցաւ խիստ ցաւալի յապաղումէ մը վերջ. կը յուսամ թէ թշնամութեանց այս կարճ դադարումէն օգտուելով պիտի իրագործուին բարենորոգումները որոնք այնքան անգթօրէն պէտք են այս դժբաղդ երկիրներուն: Գոհ եմ որ Իտալացի զորապետ մը կարգուեցաւ իբրև վերակազմիչ Մակեդոնիոյ ժանտարմայութեան, իրեն հետ ունենալով ուրիշ սպաներն»:

Բարիզ. — Ռուսական պատասխանագիրը որ հաղորդուեցաւ եւրոպական դահլիճներուն, զիջումներ կընէ ի նպաստ ճաբոնի այնպէս որ կը յուսացուի թէ պատերազմ չըլլայ:

Ս. Բեդրոսպուրկ 3. Փետր. — Կը ծանուցուի որ պատասխանագիրը պիտի յանձնուի ամսոյս 6ին:

— Ընդհանուր սպայակոյտը Ալէքսիէֆ ծովակալին արտօնութիւն տուաւ պատերազմ յայտարարելու եթէ ինք հարկ տեսնէ: Ամեն կողմէ կսպասուի որ Չարը պատերազմը հրատարակէ այն պարագային որ ճաբոն մերժէ Ռուսական պատասխանագիրն որ և է մէկ հատուածը:

Թորիոյ — Տենդոտ անհամբերութեամբ կըս-

սաստիկ յուզուած են: Իթօ մարքիզը յանկարծ գիշերանց իր գիւղի բնակարանէն կանչուեցաւ արքունիքը, ուր արտասովոր ժաշով մը գումարուեցաւ որ տեեց 7 ժամ և որուն ներկայ էին նախարարապետը, Մերերը և պատերազմական նախարարը. այս նիստին խիստ մեծ կարեւորութիւն կը տրուի:

— Սթանտարտէ կը քաղենք հետեւեալը.

Անգլիա առ այժմ հանդիսատես պիտի մընայ Ռուսո—ձաբոնական կնճիւղին հանգէպ, եւ պիտի սպասէ մինչեւ որ իրարու զարնուին. բայց եթէ Ռուսիա պզտիկ յաղթանակ մը տանի ձաբոնի վրայ, ասիկա պատճառ պիտի ըլլայ անգլիական զէնքով միջամտութեան, և արդէն այս մտքով է որ այս պահուն Տարտանէլի առջեւ համախմբուած են անգլիոյ 52 առաջնակարգ և ահաւի մարտանաւերը, զրահաւոր, յածաւորակ, թօրթիւանաւ և այլն. որոնք առաջին նշտնին մինչեւ իսկ բռնի պիտի անցնին Տարտանէլէն և Վոսթորէն և անկից Սև ծով. քանդելու համար ռուսական բոլոր նաւահանգիստները: Այս պարագային սև ծովու ռուսական նաւատորմիչէն այն նաւերը միայն պիտի կրնան ազատիլ որոնք գետերը կրնան ապաստանիլ, այսինքն փոքրիկ նաւերը»:

Ինչպէս կը տեսնուի Սթանտարտի պէս կէս պաշտօնական կարեւորութիւն մը ունին խմբագրականէն, Անգլիա անտարբեր չէ՛ նստած, այլ կը գործէ և եթէ հաստատութիւն գտնէ այս հրատարակուած լուրը, նոյն ատեն Ռուսո—ձաբոնական պատերազմը դուռը բացած պիտի ըլլայ արեւելեան խնդրոյն ալ:

Հետեւեալը շրկուած է մեզ հրատարակելու խնդրանքով.

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Ազգայնական» յօդուածագրին՝ Տ. Տաւաւսեանի.

Միութիւն» ուրախութեամբ կարգաց «Ազատ Բեմ»ի 34 թիւին մէջ նորահաստատ Միութեան մասին ՏիարՄ. Տամատեանի յօդուածը, արդիւնք իր անկեղծ համակրանքին և ազնիւ հետաքրքրութեան. ուրեմն և մենք հարկ կը համարենք պատասխանել ազնիւ յօդուածագրին կարգ մը հարցերուն:

Միութիւնս չունեցաւ պարբերաբար բաժնեգին վճարոյ անդամուհիներ նկատի ունենալով բաժնեգին հաւաքելու գծուարութիւնները: Սեր մէջ շատ անգամ պատահած է որ բաժնեգիներու չի գանձուելով և անդամներու ժողովի չի մասնակցելով ինքնիրեն քայքայուած են ընկերութիւններ: Մերը ինչպէս ըսուած է, զուտ

բարեգործական և շատ պարզ ձեռնարկ մ'է, որի նպատակը լինելու է կանանց դասի մէջ նուիրատուութիւններու, հանգանակութիւններու, ևնի միջոցաւ հասոյթ մը ձեռք բերել և այս հասոյթը հասցնել բանտարկեալներու. իսկապէս մեր բուն գործը կը կայանայ դրամ ձեռք բերելուն մէջ, իսկ նպատակի երկրորդ մասը մեր ուժերէն ու միջոցներէն վեր լինելուն, պիտի գիմենք Յեզ. կազմակերպեալ մարմիններու որ ցոյց տան մեզ իրենց կարօտ բանտարկիս ընկերները և նոյն իսկ իրենք յանձն առնեն այդ նպատոները տեղ հասցնել:

Այսքան պարզ բանի մը համար բարդ կազմակերպութիւն մը աւելորդ համարած էինք, և ճիշդն ըսելով, կը նկատէինք նոյն իսկ պատճառանյալողութեան:

Գալով հաշուետուութեան, ինչ որ կը վերաբերի նուիրատուութեանց, կարծեմ ոչ մի կտակածի տեղի չի մնար, երբ այն պիտի հրատարակուի թերթերու միջոցաւ, իսկ նպատոներու բաշխումը քանի որ կազմակերպեալ մարմիններու միջոցով լինելու է, տարեկան հաշուետուութեան երեւնալուն կարելի պիտի ըլլայ ճշգրութիւնը հաստատել և մատնանիշ ընել սխալները եթէ կան: Այս պարզ միջոցով, կը կարծենք թէ հաշուետուութիւնն ալ հաստատ հիմերու վրայ դրուած կըլլայ:

Միութեանս գործող մարմնի անդամուհիներու թիւը եղած է 7, որովհետեւ այդ եօթնէ գուրս ուրիշ անկիւններու եղաւ թէև գիմում, բայց անոնք կարգ մը բանաւոր պատճառներով և մանաւանդ նկատելով որ Միութիւնս գործելու է գրեթէ Յեզ. մարմիններու հետ, մերժեցին ուղղակի անդամակցիլ, ոիրայօժար խոստանալով միևնոյն ատեն չի զլանալ իրենց բարոյական աջակցութիւնը: Միութեանս գործելու նոյն այդ եղանակն է որ պատճառ եղած է նաև անդամուհիներու ամբողջին իրենց իրական անուամբ հրապարակ չի դալուն: Այդ մերժումները տեսնելով Միութիւնս այլևս չի գիմեց ուրիշներու, բայց եթէ կան տիկիներ որ կը ցանկան անդամակցիլ, Միութիւնս շնորհակալութեամբ կընդունի իրենց աջակցութիւնը:

Այսպէս ուրեմն Միութիւնս պիտի գործէ Յեզ. կազմակերպութիւններու հետ, իր ներքին կանոնադիրը չի ծառայէր միայն ճշգրտու անդամուհիներու փոխադարձ յարաբերութիւնները, այլ վերև յիշուած կազմակերպեալ մարմիններու հետ ունենալով յարաբերութիւնները:

Ի Դիմաց կարմիր խաչի Միութեան
Ատենապետ
Վ. Կ. ԲԱՇԱԵԱՆ-ԽԱՆ

ԲԱՐԻՉԸՆ ԲԷՔԻՆ ՏԱՍՆԸ ԻՆԸ ՕՐՈՒԱՆ ՄԷՉ

Բարիչեան հանդէս մը կը հրատարակէ շոհեկան տեղեկութիւններ նոր շինութիւնք այ՛ երկաթուղիին մասին, որ ուղղակի Բարիչէն Բեքին այ՛, աղէկ կարգացի՛ք. Բարիչէն Բեքին պիտի երթայ, որիէ կրնայ հետեւցուիլ անոր ինչ արգիւնք ունենալը:

«Անցեալ հոկտ. 8ին, Թէրմինուս պանդուկին մէջ տեղի ունեցաւ երկաթուղիներու ընկերութեանց տնօրէններու ժողովը, որ կազմակերպուած էր արեւելեան Չինաստանի երկաթուղիի ընկերութեան ներկայացուցիչ Մ. տը Բարսի կողմէ:

Այս ժողովին կ'անդամակցէին հետիսային և արևմտեան Փրանսայի, Օրլէանի, Պէլճիական, Հոլանտական, Կերմանական, Աւստրիական, միջազգային կառախումբերու, և հարաւ-արևելեան նահանգներու երկաթուղիի ընկերութեանց ներկայացուցիչները:

Ժողովին նպատակն էր Բարիչէն Բեքին երկաթուղիով ճամբորդելու անհրաժեշտութեան միջազգային միջոցներ խորհիլ:

Այս ճրագրին մէջ էր նաև ճշգրել մասնաւորաբար թէ հետեւեալ քաղաքներէն՝ Լոնտոն, Բարիչ, Պրիւսէլ, Ամսթերտամ, Պէրլին, Վիէննա, Պուտարէշտ, Սէն Բեյերսպուրկ՝ որոնց մէջ պէտք է տոմս տայ Տալինի, Բեքինի, Շանհայի, Եօքօ Համայի և Մանրագոյն Արևելքի արիչ բոլոր քաղաքներուն համար: Ասիէ զատ ճշգրտեցան նաև կառախումբի, բռնի, ամսերու գինի ևն բոլոր խնդիրները: Արոշուած պայմանները այնքան բազմաթիւ են, որ կարելի չէ զանոնք թուել:

Միայն կարժէ յիշատակել թէ ու է մեկուն մեծ քաղաքներէն՝ ռուսական սահմանագրութիւն հեռաւորութիւնն է, այսինքն մինչև Աղեքսանդրաբոլ և Վիրպալէն, մի միայն երկու կամ երեք օրուան ճամբով մը: Իսկ ռուսական սահմանագրութիւն մինչև Բորթ—Արթիւր (Տալինի)՝ տասնը հինգ օրուան ճամբով մը:

Արագընթաց կառախումբեր, որոնց մէջ պիտի գտնուին անկողին և ճաշարան վակօններ, շաքաթը երեք անգամ պիտի մեկնին ռուսական սահմանագրութի կայարաններէն: ուղղուելով Մոսկուա. Իրբութսք. Բէքին և Բորթ Արթիւր: Այս կառախումբերը հազորակցութեան մէջ պիտի գտնուին եւրոպական գլխաւոր գիծերուն

եւ ահա ինչպէս. վաղը եւրոպական քաղաքակրթութիւնը պիտի կրնայ տասնը ինը օրուան մէջ Բէքինի գոտները ոտք կոխել:

Թրանս-Ասիական ընկերութեան մէկ շոգեւանան՝ որ Կալպիայէ Ամերիկա կերթայ վեց օրէն հետեւեալ պաշարը կուսնայ. 425 հազար քիւտանոյշ ջուր, 25000 հակիթ, 12000 քիւօլրամ. խաւարտեղէն, 2250 քիւօլրամ աղած միս, 1000 քիւօլրամ ձուկ, 6 հազար քիւօլրամ մրդեղէն, 6 հազար քիւօլրամ ալիւր, 2 հազար քիւօլրամ հումու միս, 1600 քիւօլրամ միս, 24880 լիտրա զանազան ըմպելիք, 7722 լիտրա կաթ, 35 հազար քիւօլրամ բաթմաթէս, 3 հազար 5 հարիւր քիւօլրամ կարագ իւղ, 33 հազար քիւօլրամ սառ:

Մօտերս Ամերիկայի Սէն Լուի քաղաքի մէջ քացուելիք տիեզերական Արուեստահանդէսին ահաւելի տեսարանը պիտի ըլլայ երկու լոգոմոթիֆներու միեւնոյն տեղէն արագաբար մինչև որոշեալ կէտը սուրալ, և ամենայն դօրութեամբ ընդհարելով՝ մէկզմէկ ջարդակտոր ընել: Բիւրաւոր հետաքրքիր ամերիկացիք այսպէս ստեամ պիտի ըլլան շոգեկառաց ընդհարման արկածը:

Թիպէթի մէջ բարեւի ամենափափուկ կերպն է ելեր, պատահած անձին դէմ թեւերը կայել և լեզուն դուրս հանել:

Ամերիկայի Շիքալօ քաղաքի մէջ կանայք տկուժ մը կազմելով՝ միաբաններ առաջագրեր են որ ակումբին մասնակցող կանայք իրենց գեղեցկութիւնն անաղարտ պահելու համար պարտաւոր ըլլան հետեւեալ եղանակաւ կենցաղավարել:

Չկարգալ գորովաշարժ վէպեր:
24 ժամու մէջ 1ու կէս լիտրայէ աւելի ըմպելի չխմել. այսինքն՝ ամէն կերակուրի ժամանակ երկու գաւաթէ աւելի ըմպելիք չգործածել:

Չափաւոր ուտել և զգուշանալ զանազան ուտելիքներէ, որոնք գէմքին թարմութիւնը չուտով կը ջնջեն:

Երեկոյին ուշ առեն բնաւ չուտել. որովհետեւ հանգիտութեան համար պէտք է որ մարսողական գործողութիւնը անկողին մտնելէ առաջ աւարտած ըլլայ:

Դէմքը ծածկել՝ տրեւու մէջ քաշելու ատեն .

Անկողնի ու շոգեկառաց մէջ չկարգալ . որ պէս զի աչքերը չյոգնին .

Ասոնք են ակումբին մէջ պատրաստուած հրահանգներուն գլխաւորներն . որոնք առողջապահութեան համար ալ շատ օգտակար են .

Ծ Ի Ծ Ա Ղ

Երկու երիտասարդներ .

— Ի՞նչ կուզես ինձմէ որ զիս ամեն տեղ կարես .

— Ուր աւրեր եմ քեզի :

— Անցած գիշեր տան մը մէջ իմ վրայօքս խօսք բացուելով՝ ըսեր են թէ շատ խելացի է դուն ալ ըսեր ես որ անխելքին մէկն է .

— Այդ ըսածներուդ մէջ ամենեկին ճշմարտութիւն չիկայ . երբէք չի գտնուեցայ անանկ տեղ մը՝ ուր քեզի համար խելացի է ըսած ըլլան ու ես ալ խելացի չէ ըսած ըլլամ .

Մարկոս աղան կը տեսնան կոր .

— Չէ , հետը աղէկ չեմ .

— Ինչո՞ւ , պզտիկուց մէկտեղ մեծցած , անբաժանելի բարեկամ էիք իրարու .

— Ճշմարիտ է , բայց անցեալները անանկ բան մը ըրաւ որ բոլորովին պապեցայ իրմէ .

— Ի՞նչ ըրաւ .

— Ի՞նչ պիտի ընէ , եկաւ ինձի ըսաւ որ զոքանչդ մեռաւ .

— Է՛յ .

— Իրիկունը տուն դացի նէ՛՛ յօքոնջս սէտիրին քէօչէն նստելու էր թուռի պէս .

— Հասկցայ , խաբեր է քեզի :

— Աղբար . իր ընկերոջը մարդ աւանկ կատակ կրնէ՞ մի ես .

Յակոբիկ ազա , ինձի բան մը մէռաք եղաւ .

— Ի՞նչ բան .

— Գլխեմ , անցած տարի սա մեր գրացի վար-եէմէզ Փիլիպոս աղան հիւընդցաւ նէ՛՛ կըտակ մը շինեց՝ ունեցածը չունեցածը վարժարանին կտակ ըրաւ ըսին .

— Անանկ է .

— Է՛յ ետքը աղէկցաւ նէ՛՛ ի՞նչ ըրաւ .

— Ի՞նչ պիտի ընէ , շինած գտակը գլուխը անցուց .

Տիկին մը իր կենդանագիրը քաշել տալու համար լուսանկարի մը կը դիմէ , ու ակումբին վրայ նստելուն պէս՝ կ'սկսի բոլոր ուժը թափել որ բերանը շատ պզտիկ ելլայ .

— անհանգիստ մի՛ ըլլաք տիկին , կըսէ , կուզէք նէ՛՛ բերան ամենեկին չեմ շիներ :

Ծանծաղամիտ բանաստեղծ մը՝ գրած ոտանաւորները իր մէկ բարեկամին երկար բարակ կարգալէն ետքը դարձաւ հարցուց թէ՛ որ կտորները աւելի աղէկ երեցան իրեն .

— Ձի կարգացածներդ , պատասխանեց երկայն շունչ մը առնելով .

Հոս խանութ բացիք , Մարտիրոս աղա .

— Հրաման էք , արհեստնիս փոխեցինք . քարեօլանի խանութ բացինք . ի՞նչ ընենք .

— Շատ աղէկ էք ըրեր . գործ ըլլայ տէ՛՛ վնաս չունի . բայց այսօր կիրակի չէ՛ .

— այո՛ .

— Խանութը ինչո՞ւ բացեր էք . այսօր հանգըստութեան օր է .

— աղբար , ես ալ հանգստութեան ապրանք կը ծախեմ կոր .

Օրիորդ մը — ճանը՛մ , հիմակուան ժամանակըս ալ բոլոր չէնք շնորհք մարդիկը ամուսնացած են .

Տիկին մը — կը սխալիք օրիորդ , շնորհքով տեսած մարդիկը ամենքն ալ ժամանակին անանկ չէին , հետզհետէ շնորհքի մտած են .

Գեղտնի օրիորդ մը Բարիզի մէջ երիտասարդ փաստաբանի մը գրասենեակը կը մտնէ ու կարճ խորհրդակցութենէ մը վերջ կը հարցնէ .

— Ի՞նչ կը պարտիմ ձեզ այս խորհրդակցութեան համար .

— Համբոյր մը միայն , օրիորդ .

— Շատ լաւ պարոն , (ու մեծ մօրը դառնալով) մեծ մայրի՛կ , վճարէ՛ պարոնին պահանջած վարձքը .

Թ . Թ

ՏԵՐԱԿՐԻՔ

Աժանս Բոժածիկ եւ Ընկ .

Սուգ—էլ—Ֆըռթ

Օրիորդ Մէննու՝ որ դիմացի գրացւոյն տը-
ղուն հետ ցորեկ ժամանակ անձայն հեռագրով
(իշմարաբանութեամբ) կը տեսնուէր, հիմա գի-
շերներն ալ սկսած է յանպա խաղցունելով
տեսնուիլ :

Ռիւ Բօսթ

Երեք զաւակաց հայր պարոնի մը այցու-
քարտերովը լեցուն թղթապանակը գտնուեցաւ
շանթօզի մը խանութին մէջ .

Բոժ .— Տէրը ով է նէ թող երթայ առնէ .

Քալիֆոռնիա

Յովհաննու Կարապետի մը անուան տօնա-
խըմբութեան գացող շիք միւսիւ մը՝ նոյն տու-
նէն վերցուցած անուշի երկու արծաթ դգալ-
ները գրպանը տեղաւորած ատեն օձիքը ձեռք
տալով՝ բերանը բաց՝ ձեռքն ալ կախուած մնաց .

Սուգ—էլ—հաւկիթ

Աղատամիտ պարոն մը բարեկենդանի շաբ-
թուն պիտի ամուսնանայ օտարուհիի մը հետ,
պսակէն տաղ մտնելով սակայն աւանդական...
սարսէչայի Շրջին :

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒԾԻՆԵԱՆ

Նոր Բաղդիբ պատկերազարդ, Ֆրանսահայ
Երկու հասոր՝ 1874 մեծադիր երեսներով .

Ազգ .— Մտանազիրն փափաքելով որ իր երկասի-
րութիւնն ժառանգի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իւր նպատակն է ամենին չշահիլ, այլ վնա-
սով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորնե-
րը ի միասին 25 Ֆրանքէն աւելի չարժեն :

Դիւտէ հեղինակին հետեւեալ հասցեով .

M. G. DE LUSIGNAN

108, Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ :

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Գահիրէ Ապտինի գարագօլին գէմը, Սփինքս
դեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալի թը-
ֆէթ—էլ—էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար
(միւսերի) եւ դրուագեալ զարագաններ .

ԶՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԸՏԸՏԻՄԵԱՆ

Թրիպոնալի ետին՝ հօթէլ սէն ժօրժի կից .

Ամեն սեսակ յաւ նպարտեցններէ զաս. Չմխո-
նիայէն քերուած ընկիր օղի, գինի, ձէք, կարագ,
աճառ, տուխերով գոնետրփաներ, պատրաստ անու-
շեղեմ եւ ոշտրակներ՝ նարինջ, բայ, բարձր ընկոյզ
եւ յում (գրգռոյզ). նաեւ Արաշէհիրի հանփային
չուրը որ դժուարամարտութիւնը կը դարձանէ .

Սոյն վաճառասունը կը խոստանայ իրեն դի-
մող յաճախողները գոհացնել անխարդախ ապ-
րանքներովը եւ գինետր չարխառորտքամբը

Մեր այս ըսածը հաստատու համար այցե-
լորտիւն մը բաւական է .

Մեծաքանակ ու փոքրաքանակ յանձնարա-
րութիւնք անմիջապէս կը կատարուին .

ՏՕՔԻՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից քաղաքաւանկ
Իշխանիւն

Այս անգամ Աղեփասնդրիս հաստատուած շի-
նեղով, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հա-
սարակութեան, որ ամեն օր առաւօտները ժամը
9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կրն-
դունի իր ասեւ մէջ. Աթթարին փոլոց քիւ 31,
Մզկիթին դէմը, երկրորդ յարկ .

Ներքին եւ փրարութեան հիւանդութիւննե-
րու հետ, կը դարձանէ նաեւ երախաներու հիւան-
դութիւնները, 15 արոյն մասնագիտական փորձա-
նորութեամբ .

Յացող կերպով կը դարձանէ նաեւ ԱՔիօնա-
մոյութիւնը եւ ՄորՔիւսանոյութիւնը, որոնց դէմ
հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ
Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած
են այդ մոյութիւնը .

12

Տ Պ Ա Ր Ա Ն

ԳԱՅԵԼԻ Ի

«Հայտնի» ի սպարսնիւն մէջ դիրտանացելի գնով
կը սպարտուին առեւտրական տներու համար
ամեն յեզոմէ՝ Բարիզեան վերջին դրութեամբ հե-
տաքրքրաշարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոփ-
րիկ ազդարարութիւններ. կը սպարտուին նաեւ այ-
ցեւոսու, հասցեսոսու, հարսանեկան հրախրագիր,
մահագր, նախակազմութիւն, պահարան, տնակ, եւնե-
Ռոյիջ ֆաղափներէ եղած յանձնարարութիւնք
ալ փոքրով կը կատարուին .